# 756 Ահա գալիս եմ Քո առաջ՝

1. Ահա գալիս եմ Քո առաջ՝
Կոտրված ու խոնարհված,
Խնդրում եմ, հիմա ինձ ների՛ր,
Չգիտեի՝ ինչ էի անում:
Իմ կյանքով խաչում էի Քեզ,
Հալածում ու տանջում էի,
Խնդրում եմ հիմա, ինձ ների՛ր,
Չգիտեի՝ ինչ էի անում:

Հա՛յր, խնդրում եմ, ողորմի՛ր,
Հա՛յր, Քեզ կանչում եմ, ձայնս լսի՛ր:
Հա՛յր, հայր իմ, ներիր ու ողորմիր,
Հա՛յր, հայր, խնդրում եմ, Դու ինձ լսի՛ր:

2. Քո խոսքն ինձ, Տե՛ր, ապրեցրել է,
Հավիտյան կյանք է տվել,
Կույր աչքերս, Տե՛ր, բացել է,
Հոգիս լուսավորել է,
Հիմա գալիս եմ Քեզ, Տե՛ր,
Գալիս եմ, ինձ գիրկդ ա՛ռ,
Որ ապրեմ, ապրեմ հենց Քեզ հետ
Այժմ, միշտ և հավիտյան: